



Kingdom of the Netherlands



# Ձ Ե Կ ՈՒ Յ Յ

**ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների  
հասանելիության, որակի և առաջնահերթության  
գնահատման**

Ը. Երևան, Հայաստան  
2017



# Չ Ե Կ ՈՒ Յ Յ

## **ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների հասանելիության, որակի և առաջնահերթության գնահատման**

«Սույն զեկույցը հնարավոր է դարձել է իրականացնել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աջակցությամբ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆոնդերի հաշվին՝ «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար ԲՀԿ-երի աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին և հնարավոր է՝ չհամընկնեն «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Ընդհանուր նկարագիր	4
ԿՀԽ-ն միավորի գնի հաշվարկման տվյալներ	5
Ազգային ռազմավարական ծրագրով ԿՀԽ-ի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներ	6
Ըստ թիրախային խմբերի հատկացվող ֆինանսական միջոցներ	6
Ազգային ռազմավարական ծրագրով ԿՀԽ-ի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներ	7
Ազգային ռազմավարական ծրագրով սեռավարակների թեստավորման և բուժման իրականացման համար նախատեսված միավորի գներ	7
Ազգային ռազմավարական ծրագրով հոգեբանական և սոցիալական աջակցության ծառայությունների միավորի գները	8
ՄԻԱՎ վարակով հիվանդներին խնամքի և աջակցության տրամադրման թիրախները 2017-2021թթ.	9
Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	9
Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրին հատկացվող ֆինանսական միջոցները	10
ՀՌՎ բուժման թիրախները	10
ՀՌՎ բուժման հատկացվելիք ֆինանսական միջոցների կառուցվածքը	11
ՀՌՎ բուժման ֆինանսական միջոցների կառուցվածքը	11
Եզրակացություններ և ամփոփում	12

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) վարակվածության և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումն սկսվել է 1988 թվականից: ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի վիճակագրությունը հետեւյալն է՝ 1988թ. մինչև 2017թ. փետրվարի 28-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2603 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 334-ը՝ 2014թ. ընթացքում, ինչն առավելագույնն է բոլոր անցած տարիների համեմատ:

Վրաստանում Նիդերլանդների դեսպանատան կողմից ֆինանսավորված «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում անց են կացվել հարցումներ նշված խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում գնահատվել են ծրագրի շահառուներին ՄԻԱՎ-ի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում տրամադրվող ապրանքների և ծառայությունների հասանելիությունը, որակը և պահանջարկը: Գնահատման ծրագրերի ավարտից հետո կազմակերպությունները ներկայացրեցին իրենց գեկույցները, որոնք նաև ընդհանուր քննարկվեցին ծրագրային և ֆինանսական փորձագետների մասնակցությամբ:

Հաշվի առնելով վերը նշված հետազոտությունների արդյունքները, մշակվել են 2017-2021թթ համար հաստատված ՄԻԱՎ/ՁԻԱՀ հակազդման 2017-2021թթ ծրագրի թիրախային ցուցանիշների, ինչպես նաև դրանց իրականացման համար հատկացված/հատկացվելիք ֆինանսական միջոցների վերաբաշխման առաջարկություններ:

---

**Ընդհանուր նկարագիր**

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ հակազդման 2017-2021թթ ծրագրի թիրախային ցուցանիշների, ինչպես պլանավորված ծախսերի վերլուծությունն՝ հաշվի առնելով շահառուների շրջանում անցկացված հետազոտությամբ արձանագրված խնդիրները և առաջնահերթությունները: Ըստ հետազոտության արդյունքների՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն ծառայության մատուցման ժամանակ շահառուների մոտ առաջանում են դժգոհություններ՝ պայմանավորված բուժհաստատությունների թվաքանակի սահմանափակվածությամբ, ինչպես նաև

Ակնկալվող արդյունքներ/		Թիրախներ				
Առաջնահերթ միջոցառումներ	Ցուցանիշներ	2017	2018	2019	2020	2021
<b>ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի ընդլայնում:</b>	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	4220	4320	5000	5700	5700
<b>ԿՄԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում</b>	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԿՄԿ-ների թիվը	3100	3200	3280	3360	3360
<b>SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում</b>	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների թիվը	4000	5625	6500	7500	7500
<b>Միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում՝ առողջապահական ծառայությունների համապարփակ փաթեթի տրամադրմամբ</b>	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված միգրանտների թիվը	28000	30000	32000	34000	35000

Ազգային ծրագրի բյուջետավորման ժամանակ միավորի հաշվարկման համար բոլոր ծառայություններ մատուցողների մոտ իրականացվել է մատուցվող ծառայությունների միավորի գնի հաշվարկ, որից հետո համանման ծառայությունները միջինացվել են:

ԿՀԽ-ն միավորի գնի հաշվարկման տվյալները ներկայացված են ստորև

Աղյուսակ 1

Միավորի գին (EUR)	Բոլոր մատակարարների միջին ցուցանիշ (EUR)	Բոլոր մատակարարների միջին կշռված ցուցանիշ (կշռված ըստ ծավալի, EUR)
<b>Նախաթեստային խորհրդատվություն</b>	14,4	8,8
<b>Հետթեստային խորհրդատվություն</b>	14,4	8,8
<b>Լաբորատոր հետազոտություն</b>	3,1	2,2
<b>Ընդամենը</b>	<b>30,8</b>	<b>18,4</b>

Նշված միավորի գնի դեպքում 2017-2021թթ հատկացվելիք ֆինանսական միջոցների ծավալը ներկայացված է աղյուսակ 2-ում


**Ազգային ռազմավարական ծրագրով ԿՀԽ-ի իրականացման համար նախատեսված  
ֆինանսական միջոցները**

Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Հատկացված/հատկացվելիք ֆինանսական միջոցների /EUR/					
	2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
Ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	77 648,0	79 488,0	92 000,0	104 880,0	104 880,0	<b>458 896,0</b>
Ընդգրկված ԿՄԿ-ների թիվը	57 040,0	58 880,0	60 352,0	61 824,0	61 824,0	<b>299 920,0</b>
Ընդգրկված ՏՄՏ-ների թիվը	73 600,0	103 500,0	119 600,0	138 000,0	138 000,0	<b>572 700,0</b>
Ընդգրկված միգրանտների թիվը	515 200,0	552 000,0	588 800,0	625 600,0	644 000,0	<b>2 925 600,0</b>
<b>Ընդամենը</b>	<b>725 505,0</b>	<b>795 886,0</b>	<b>862 771,0</b>	<b>932 324,0</b>	<b>950 725,0</b>	<b>4 257 116,0</b>

Ըստ թիրախային խմբերի հատկացված ֆինանսական միջոցները ներկայացված են գծապատկեր 1-ում

Գծապատկեր 1

Ըստ թիրախային խմբերի հատկացվող ֆինանսական միջոցները



ԿՏ նյութերի եւ գիտելիքների տրամադրում, պահպանակների, լուրրիկանտների, ներարկիչների և ասեղների տրամադրում ծառայությունները մեծամասամբ հասանելի են:

Նշված ծառայությունների մասով միավորի գների հաշվարկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Ազգային ռազմավարական ծրագրով ԿՀԽ-ի իրականացման համար նախատեսված  
ֆինանսական միջոցները

Միավորի գին (EUR)	Չափման միավոր	Բոլոր մատակարարների միջին ցուցանիշ (EUR)	Բոլոր մատակարարների միջին կշռված ցուցանիշ (կշռված ըստ ծավալի, EUR)
<b>Վարքագծային փոփոխության ծառայություններ</b>	Շահառու	25,9	26,1
<b>Աութորիզների աշխատանքների կազմակերպում</b>	Շահառու	28,3	26,1
<b>Պահպանակների բաժանում</b>	Շահառու	7,4	7,6
<b>Տեղեկատվական թերթիկների բաժանում</b>	Շահառու	4	3,3
<b>Ներարկիչների բաշխում</b>	Շահառու	12,2	5,8

Քանի որ նշված ծառայությունները հիմնականում հասանելի են՝ չնայած որոշ դեպքերում նշվել են աութորիզ աշխատողների գերբեռնվածություն և տրամադրման կետերի պակաս, ազգային ռազմավարական ծրագրում լրացուցիչ փոփոխությունների անհրաժեշտություն չկա:

Սեռավարակների հետազոտության և բուժման ծառայությունների մասով շահառուները որպես խնդիր առանձնացրել են բացահայտման հնարավորությունը, տարածքային անհասանելիությունը:

Շահառուների սեռավարակների թեստավորման և բուժման միավորի գները արտացոլված են ստորև բերված աղյուսակում՝

Ազգային ռազմավարական ծրագրով սեռավարակների թեստավորման և բուժման  
իրականացման համար նախատեսված միավորի գները

Միավորի գին (EUR)	Բոլոր մատակարարների միջին ցուցանիշ (EUR)	Բոլոր մատակարարների միջին կշռված ցուցանիշ (կշռված ըստ ծավալի, EUR)
<b>Սեռավարակների վերաբերյալ թեստավորում</b>	11	5,8
<b>Սեռավարակների բուժում</b>	33,9	34,3

Ազգային ռազմավարական ծրագրում շահառուների շրջանում սեռավարակների բուժումը որպես թիրախային ցուցանիշ ամրագրված չէ:

Նշված ծառայության հասանելիության բարձրացման համար առաջարկում ենք կիրառել նույն մեխանիզմը, ինչ որ ԿՀԽ ծառայության մասով, մասնավորապես ավելացնել բուժհաստատությունների թիվը, որոնցում շահառուները հնարավորություն կունենան հետազոտվել և բուժվել, ինչպես նաև մարզկենտրոններում ապահովել շուրջօրյա հերթապահություն: Նշված ծառայությունների հասանելիության բարձրացման համար լրացուցիչ գումարի անհրաժեշտություն չի առաջանա, եթե բուժհաստատությունների/բժիշկների հետ կնքվեն գործավարձային պայմանագրեր:

Սոցիալական աջակցության, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվության ծառայությունները շահառուների կողմից գնահատվել են որպես հասանելի: Նշված ծառայությունների միավորի գները ներկայացված են աղյուսակ 5-ում

Աղյուսակ 5


**Ազգային ռազմավարական ծրագրով հոգեբանական և սոցիալական աջակցության ծառայությունների միավորի գները**

Միավորի գին (EUR)	Չափման միավոր	Բոլոր մատակարարների միջին ցուցանիշ (EUR)	Բոլոր մատակարարների միջին կշռված ցուցանիշ (կշռված ըստ ծավալի, EUR)
<b>Հոգեբանական աջակցություն</b>	խորհրդատվություն	31,4	31,2
<b>Սոցիալական աջակցություն</b>	խորհրդատվություն	19	8,4

Բժիշկների շարժական խմբի ծառայության մասով ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում առկա է տեղեկացվածության պակաս, ուստի ոչ բոլորն են օգտվում նշված ծառայությունից:


Անհասանելիության պատճառ է հանդիսանում նաև փոքր թիրախները: Այկսպես 2017-2021թթ նախատեսվում է «ՄԻԱՎ վարակով հիվանդներին խնամքի և աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակներում սպասարկվող անձանց թիվը 2017թվականի 1500-ից դիմաց 2021թ-ին հասցնել մինչև 3000 (Գծապատկեր 2): Թիրախների աճին զուգընթաց արդյունավետության բարձրացման համար առաջարկում ենք ՄԻԱՎ վարակով հիվանդների շրջանում անցկացնել լրացուցիչ ակցիաներ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել տեղեկացվածության մակարդակը: Նշված ծառայությունների մատուցման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա, քանի որ ազգային ռազմավարական ծրագրում արդեն իսկ ներառված են մի շարք միջոցառումներ:






Փոխօգնության խմբերի մասով շահառուների մոտ հասանելիության խնդիրներ չեն արձանագրվել: Ազգային ծրագրում փոխօգնության խմբերի մասով ևս նախատեսվում է շահառուների թվաքանակի ավելացում:

Մեթադոնային փոխարինող բուժման մասով մեծամասնությունը ասել է, որ ծառայությունները հիմնականում հասանելի են: Ազգային ծրագրով նախատեսվում է մեթադոնային բուժում ստացող ԹՆՕ-ների թվաքանակի անընդհատ ավելացում՝ 2021 թվականի համար հասցնելով 800-ի 2017թ-ի 480-ի դիմաց:




Միևնույն ժամանակ շահառուների թվաքանակի աճին զուգընթաց ծրագրի իրականացման համար սկսած 2018թ-ից գումարներ են հատկացվելու նաև պետական բյուջեից: Նշված ծրագրի իրականացման համար հատկացվող ֆինանսական միջոցները ներկայացված են գծապատկեր 3-ում:



ՀՌՎ բուժման տրամադրման մասով հիվանդների շրջանում անհասանելիության դեպքեր որպես այդպիսիք չեն արձանագրվել:


ՀՌՎ բուժումը ազգային ռազմավարական ծրագրում արտացոլված է թվով 3 միջոցառումներում՝ ՀՌՎ բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակ ունեցող հիվանդներին, ՀՌՎ բուժում ստացող հիվանդների շրջանում բուժման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգի իրականացում, ՄԻԱՎ վարակ ունեցող հղիներին և նրանցից ծնված նորածիններին ՀՌՎ կանխարգելիչ բուժման տրամադրում: ՀՌՎ բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակ ունեցող հիվանդներին, ՀՌՎ բուժում ստացող հիվանդների շրջանում բուժման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգի իրականացում միջազգային միջոցառումների շրջանակներում պլանավորված ժամանակահատվածում նախատեսվում է շահառուների թվաքանակի անընդհատ աճ, իսկ ՄԻԱՎ վարակ ունեցող հղիներին և նրանցից ծնված նորածիններին ՀՌՎ կանխարգելիչ բուժման տրամադրում միջոցառման շահառուների պլանավորված թիվը կազմում է 30 Գծապատկեր 4):

Գծապատկեր 4




Նշված միջոցառումների իրականացման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում է ներգրավել նաև պետական բյուջեից: Ֆինանսական միջոցների բաշխումը ըստ տարիների ներկայացված է գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5



Նշված միջոցառումներից յուրաքանչյուրի մեջ պետության մասնակցության չափը էականորեն տարբերվում է: Մասնավորապես ՀՌՎ բուժման ապահովման մեջ պետության մասնակցության չափը բարձր է՝ պայմանավորված ՀՌՎ դեղերի ձեռքբերումով: Պետական բյուջեից և այլ աղբյուրների տեսակարար կշիռը ներկայացված է գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6



Հաշվի առնելով շահառուների կողմից բարձրացված խնդիրները ԿՀԽ ծառայության կազմակերպման արդյունավետության բարձրացման համար առաջարկում ենք՝

1. Պատվիրատուները մարզկենտրոնների, Երևան քաղաքի, Գյումրի, Վանաձոր քաղաքի շահառուների համար պայմանագիր կնքեն միայն այն բուժհաստատությունների հետ և / կամ ոլորտային ՀԿ-ներին ներգրավել որպես ԿԻՏ ծառայություն մատուցող կազմակերպությունների, որոնք հնարավորություն կունենան ապահովել շուրջօրյա ԿԻՏ ծառայություն կամ շահառուներին հարմար ժամերին հասանելիություն, իսկ մնացած քաղաքներում ցերեկային ժամերին ապահովել առնվազն 1 մասնագետի ներկայություն: Նշված ծրագրի իրականացման համար ազգային ռազմավարական ծրագրում անհրաժեշտ է իրականացնել ծառայության ավելացում, մասնավորապես «Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար սեմինար-վարժանքների անցկացում» ենթածրագրի շահառուների թիվը ավելացնել 30-35-ով: Նշված թվաքանակի ավելացման դեպքում ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կավելանա 1.5-1.75 մլն ՀՀ դրամով:

2. Առաջիկա աշխատողների գերբեռնվածության մասով առաջարկում ենք ազգային ռազմավարական ծրագրի բյուջետավորման հատվածում ներառել մեկ առաջիկա աշխատողի հաշվով սպասարկվող շահառուների թվաքանակի միավոր գնի ճշգրտման գործակից: Դրա արդյունքում հնարավոր կլինի գնահատել հաստատուն ծախսերի կայունության աստիճանը շահառուների թվաքանակի համեմատ և դրանց աճի դեպքում փոփոխել միավորի գները: Նման գործակցի հաշվարկման համար անհրաժեշտ է լրացուցիչ վերլուծել ծառայություններ մատուցողների մեկ առաջիկային բաժին ընկնող շահառուների միջին թվաքանակը, առաջիկայի կողմից նրանց կոնտակտի մեջ մտնելու հաճախականությունը, տևողությունը և դրանց արդյունքում մշակել նորմատիվային ցուցանիշ: